



Հաստատում եմ՝
Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի տնօրեն Արա Իսգանյան

ԿԱՐԾԻՔ

Մատենադարանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտի Արևելագիտության բաժնի 2026 թվականի
փետրվարի 14-ի նիստի

ԲԱԺՆԻ ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ. բաժնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Քրիստինե Կոստիկյանը, բաժնի անդամներ՝ պատմական գիտությունների
դոկտոր Վահան Տեր-Ղևոնդյանը, պատմական գիտությունների թեկնածուներ
Վեներա Մակարյանը, Գագիկ Դանիելյանը, Սեյդեհենասիմ Ֆաթեմին և Վերա
Սահակյանը, գիտաշխատողներ Անի Ավետիսյանը, Անահիտ Թովմասյանը և Էլինա
Ղազարյանը:

ԼՍԵՑԻՆ. Տաթևիկ Սուրբատի Մկրտչյանի «Nahğ al-balāğā-ն որպես վաղ շրջանի շիա
խսլամի ուսումնասիրության աղբյուր» պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. պատմական գիտությունների դոկտորներ Վահան Տեր-
Ղևոնդյանը, Քրիստինե Կոստիկյանը, պատմական գիտությունների թեկնածուներ
Գագիկ Դանիելյանը և Վեներա Մակարյանը:

Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Տաթևիկ Մկրտչյանի «Nahğ al-
balāğā-ն որպես վաղ շրջանի շիա խսլամի ուսումնասիրության աղբյուր»
ատենախոսության թեման արդիական է: Այն ունի գիտական և գործնական կարևոր
նշանակություն:

Հրապարակային պաշտպանության ներկայացված սույն աշխատանքը նվիրված է իսլամի Մուհամմադ մարգարեի (մահ. 632 թ.) հորեղբորորդի և փեսա, չորրորդ բարեպաշտ խալիֆա և շիա առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբին (մահ. 661 թ.) վերագրվող ճառ-քարոզների, ուղերձ-նամակների և ասույթ-առածների «Նահջ ալ-բալադա» («Ճարտասանության ուղի») կոչվող ժողովածուի ուսումնասիրությանը: Աշխատությունն ավանդաբար վերագրվում է բաղդադցի շիա մահմեդական գիտնական և բանաստեղծ ալ-Շարիֆ ալ-Բադիի (մահ. 1015 թ.) գրչին: Այն իսլամական (մասնավորապես շիական) կրոնական գրականության երեք հիմնաքարային սկզբնաղբյուրներից մեկն է՝ իր կարևորությամբ շիա իսլամի համար սրբազան համարվող տեքստերի շարքում երկրորդը՝ Ղուրանից հետո և շիական չորրորդ իմամ Ալի ալ-Սաջջադին (մահ. 713 թ.) վերագրվող աղոթագրքից առաջ:

Հայաստանի երեք մահմեդական հարևաններից երկուսը՝ Ադրբեջանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը շիական գերակշիռ բնակչություն ունեցող երկրներ են, հետևաբար այս ուղղության ուսումնասիրությունը մեզ համար ունի թե՛ գիտական-տեսական, և թե՛ խիստ գործնական-կիրառական նշանակություն: Հարևանության և առհասարակ շիա մահմեդական աշխարհի հետ քաղաքական ու մշակութային երկխոսության անհրաժեշտության հանգամանքը խիստ արդիական է դարձնում իսլամի այս ճյուղի դավանաբանական և կրոնագաղափարախոսական հիմքերի ուսումնասիրությունը հայրենական արևելագիտության մեջ: Տաթևիկ Մկրտչյանի ատենախոսությունն առաջընթաց քայլ է այս ուղղությամբ, որը կարող է նպաստել հետազոտության այս ասպարեզի հետագա զարգացմանը:

Կրոնադավանաբանական նշանակությունից զատ՝ «Նահջ ալ-բալադան» բարձր է գնահատվում նաև որպես գրական ստեղծագործություն՝ իր ուրույն տեղը զբաղեցնելով միջնադարյան արաբական գրականության, իմաստասիրության և ճարտասանության ավանդույթում:

Հետազոտությունը միջգիտակարգային բնույթ ունի և շարադրված է տեսական հարուստ գրականության հիման վրա:

Ատենախոսությունը անկասկած նորույթ է պարունակում և շարադրված է գիտական պատշաճ մակարդակով:

Ատենախոսությունն ունի կոռ կառուցվածք, որը բաղկացած է «Ներածությունից», չորս գլուխներից, «Եզրակացությունից», «Օգտագործված գրականության ցանկից» և երկու հավելվածներից:

Ինչպես ցանկացած աշխատանք, ատենախոսությունը գերծ չէ որոշ թերություններից:

1. Նախ գնահատելի է թեմային առնչակից բազմալեզու գրականության ներառումը Տ. Մկրտչյանի աշխատանքում՝ այդ թվում Տահերա Կուտբուդդինի 2024 թ. քննական հրատարակության (զուգադիր անգլերեն թարգմանությամբ) հիշատակումն իր օգտագործած աղբյուրների շարքում: Այնուամենայնիվ, այս արդի գիտական հրատարակությունը՝ «Նահջ ալ-բալադայի» ամենաարժեքավոր հինգ ձեռագրերի (վաղագույնը՝ 11-րդ դար) հաշվառմամբ, ավելի արժանի էր հետազոտական աշխատանքի համար հիմք ծառայելու համար, քան Սուբիի ալ-Սալեհի հեռավոր 1967 թ. հրատարակությունը, որն օգտագործել է ատենախոսը:
2. Տ. Մկրտչյանի աչքից վրիպել են «Ճարտասանության ուղու» վերաբերյալ որոշ հայալեզու աշխատանքներ: Հիշատակության է արժանի իրանահայ բանաստեղծ Ազատ Մաթեանի մի հոդվածը, որում հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգության» պոեմի և ալ-Ռադիի «Նահջ ալ- բալադայի», ինչպես նաև շիական կրոնական այլ տեքստերի միջև (տե՛ս Ա. Մաթեան, «Գրիգոր Նարեկացու Մատեանը և իրանական միստիկ գրականությունը», *Հասկ հայագիտական տարեգիրք*, հտ. Ժ (2006), էջ 103-108): «Ճարտասանության ուղի» գրքից քաղված որոշ հատվածներ իրանական ամսագրերից մեկում հայերեն թարգմանությամբ ներկայացրել է

Մարիա Այվազյանը (տե՛ս M. Āywāzyān, “Gozideh-ye az Nahğ al-balāğeh be-zeban armanī,” *Farhang* 33-36 (2001), 477-493):

3. Էջ 39, ծնթգր. 96 – Մեջբերում է Իբն ալ-Ասիրից, որը անհասկանալի է թե որտեղից է, քանի որ գրականության ցանկում ոչ արաբերեն բնագիրը, ոչ էլ դրա թարգմանությունները չկան:
4. Էջ 4 և այլուր – «Խուլաֆա առ-Ռաշիդուն» բառի համար օգտագործվում է «առաքինի» խալիֆներ: Ստացվում է, որ արևելագիտական հայերեն գրականության մեջ արդեն գործածվող «արդարակյաց», «ուղղահավատ» և այլ տարբերակների կողքին հայտնվում է ևս մեկը՝ «առաքինի»: Հնարավոր է որ սխալ չէ, բայց պիտի բացատրվի թե ինչու հատկապես այդ բառը:
5. Ցավոք առկա են զգալի քանակի վրիպակներ, օտար բառերի և լեզվաոճական անհարթությունները:
 - Էջ 39 – «գվարդիական էլիտա», փոխանակ «թիկնազորի վերնախավ»:
 - «Արևելյան Անատոլիա», փոխանակ «Արևելյան Փոքր Ասիա», կամ «Մեծ Հայքի արևմտյան մաս», կամ պարզապես՝ «Հայաստան»:
 - Էջ 47 – «Քում» անունով քաղաք չկա, կամ «Կում» արաբերենով, կամ «Ղում»՝ եթե պարսկերեն, քանի որ գործ ունենք «Կղաֆ» տառի հետ:
 - Էջ 120 – «նրա լոյալությունը Ալիին» փոխանակ «նրա հավատարմությունը Ալիին»:
 - Էջ 135 – ևս մի շարք օտարաբանություններ՝ էթնոկոնֆեսիոնալ, էսթետիկ, մենտալ և այլն:
 - Էջ 74 – մի պարբերություն պարզապես կիսատ է մնում:
 - Էջ 67 և 72 – amma badu և adl բառերի վրայի ապաթարցը կա իսկ բուն a-ն չի տպվել:
 - Տարբեր տեղերում օգտագործվում է «գրականագետ» և «գրականագիտական» բառերը, որոնք մեր կարծիքով այնքան էլ չեն

համապատասխանում միջնադարյան իրականությանը և կարող են փոխարինվել այլ բառերով:


- էջ 99 – «մետաղադրամը հանել» պետք է լինի «մետաղադրամը հատել»:
- էջ 57 և այլուր – չգիտես ինչու հանրահայտ բանաստեղծ ալ-Մութանաբբին դարձել է ալ-Մութաննաբի, այսինքն շադդան ոչ թե բ-ի վրա է այլ ն-ի: Ոչ թե «Իբն Խալիբան» (էջ 75, 80, 81), այլ «Իբն Խալիբան»: Ոչ թե «Աբդ Ալ-Ուահիդ Ալ-Թամիմի Ալ-Ամուդի» (էջ 133), այլ՝ «... ալ-Ամիդի» (այսինքն՝ «ամիդցի», «Ամիդից սերող»):
- Հաճախադեպ են երկարաշունչ նախադասությունները, որոնք դժվարեցնում են շարադրանքի ընկալումն ընթերցողի կողմից: Հեղինակը երբեմն կորցնում է մտքի ընթացքը՝ շարադրելով անորոշ կամ թերիմաստ նախադասություններ (տե՛ս օրինակ՝ էջ 11, 2-րդ պարբերություն, էջ 74, տողեր 16-17):
- Աշխատությունների և գիտական երկերի անվանումները և բնագրային մեջբերումները հաճախ վերցված չեն չակերտների մեջ:
- Որոշ մասնագիտական տերմիններ կամ եզրեր և բնագրային մեջբերումներ աշխատանքում ներկայացված են բնագրի լեզվով, բայց երբեմն պահպանված չէ տեքստի աջից-ձախ հավասարեցման պահանջը, ինչի պատճառով աշխատանքում տեղ են գտել տեքստային շփոթներ՝ առաջացնելով իմաստ չարտահայտող կապակցություններ կամ բառակույտեր (օրինակ՝ էջ 26, տողեր 20-21, էջ 45, տող 16, էջ 50, տող 1-2, էջ 68, տողեր 4-6, 12-13, էջ 90, տող 8 և այլն):
- Ցանկալի կլիներ աշխատանքում տեսնել արաբերենի տառադարձման ոչ թե ընտրողական, այլ միջազգային արևելագիտական շրջանակներում հեղինակավոր համարվող համակարգերից մեկի հետևողական օգտագործում: Օրինակ՝ արաբերեն «ջիմ» հարֆը (նեղ իմաստով տառը) ատենախոսության վերնագրում տառադարձված է ց տառանշանով, մնացյալ բոլոր դեպքերում՝ j-

ով: Միօրինակություն չկա նաև արաբերենի «ղա», «խա» և «շին» հարՖերի տառադարձման հարցում (երբեմն ց, երբեմն էլ՝ ցհ, որոշ դեպքերում ք, այլուր՝ kh) և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Մաշտոցի անվան Մատենադարանի Արևելագիտության բաժինը քննարկելով Տաթևիկ Սուկրատի Մկրտչյանի «Nahğ **al-balāğa**-ն որպես վաղ շրջանի շիա իսլամի ուսումնասիրության աղբյուր» թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ գտնում է, որ նշված թերությունները չեն նսեմացնում արված մեծ աշխատանքը: Այն այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Բաժինը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում, իսկ ատենախոսն արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մատենադարանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի Արևելագիտության բաժնի վարիչ,

պ.գ.դ., պրոֆեսոր՝



Ք. Կոստիկյան

Ք. Կոստիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մատենադարանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի պարտականությունները կատարող՝

Մ.Հարությունյան



14.02.2026